ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. նոյեմբերի 15-17-ը Ռուսաստանի Դաշնություն (ք.Մոսկվա) կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Վահե Առաքելյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի « Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության պետ

3. Քաղաք Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2017 թվականի նոյեմբերի 15-17-ը

4. Հրավիրող կողմը՝ «ՌԴ ֆինանսների նախարարությանը կից ՌԴ թանկարժեք մետաղների և քարերի պետական ֆոնդի ձևավորման, թանկարժեք մետաղների և քարերի պահպանման, բացթողման և օգտագործման պետական հաստատություն» դաշնային պետական հաստատության կառուցվածքային ստորաբաժանում (այսուհետ՝ Գոխրան)

5. Գործուղման նպատակը՝ ս.թ. նոյեմբերի 16-ին Ռուսաստանի Դաշնության «Ալմաստային հիմնադրամ»-ի ցուցահանդեսի բացման 50-ամյակին նվիրված միջոցառմանը մասնակցելը

6. Մասնակցեցի Ռուսաստանի Դաշնության «Ալմաստային հիմնադրամ»-ի ցուցահանդեսի բացման 50-ամյակին նվիրված միջոցառումների շարքին, այդ թվում՝

«Ալմաստային հիմնադրամի» 50-ամյակին նվիրված գիտահետազոտական կոնֆերանսին

«Ռուսաստանի ազգային գանձեր» խորագրով ցուցահանդեսի բացմանը

«Ալմաստային հիմնադրամ» 50-ամյակի ցուցադրությանը նվիրված հատուկ արարողությանը:

Մոսկվայի Կրեմլի մեծ պալատում տեղի ունեցած «Ալմաստային հիմնադրամի» 50-ամյակին նվիրված գիտահետազոտական կոնֆերանսի բացումը կատարեց Գոխրանի ղեկավար Անդրեյ Յուրինը: Բացման խոսքով հանդես եկավ նաև Ռուսաստանի Դաշնության վարչապետ Դմիտրի Մեդվեդևը: ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության անունից հանդես եմ եկել շնորհակալական խոսքով:

Պետական պարգևներով պարգևատրվեցին Գոխրանի մի շարք աշխատակիցներ:

Գոխրանի և Ռուսաստանի Դաշնության պատմության թանգարանի հետ համատեղ բացված «Ռուսաստանի ազգային գանձեր» ցուցադրության ժամանակ ներկայացված էին դարերի ընթացքում «Ալմաստային հիմնադրամ»-ի արժեքների կուտակման պատմությունը,

ցարական Ռուսաստանի պալատական խոշորագույն ոսկերիչների գործերը, Ռոմանովների ընտանիքին պատկանող պատմական իրեր և արխիվային փաստաթղթեր:

«Ալմաստային հիմնադրամ»-ի 50-ամյակին նվիրված ցուցադրության ժամանակ ներկայացվեցին նաև մի շարք նոր արժեքավոր համալրումներ:

7. Այլ՝

ՌԴ ֆինանսների նախարարի տեղակալ Ալեքսեյ Մոյիսեևի հետ համատեղ զրույցի ժամանակ քննարկվեցին մի շարք կարևոր հարցեր կապված երկու գանձարանների համընդհանուր գործառույթների հետ: Իմ կողմից համառոտ ներկայացվեց Գանձարանի 2018-2021թթ. թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված իրերի օտարման ծրագիրը: Ա.Մոյիսեևը հայտնեց, որ նմանատիպ միջոցառումներ պարբերաբար իրականացվում են նաև ՌԴ Գոխրանի կողմից: Թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված իրերը ներկայացվում են օտարման ժամանակի ընթացքում արդիկանության և դրանով պայմանավորված արժեքի կորստից զերծ մնալու համար:

Գոխրանի ղեկավար Անդրեյ Յուրինի հետ քննարկվեցին որոշ խնդիրներ, կապված ալմաստի հումքի մատակարարման և վերամշակման հետ: Նշված ոլորտի խնդրի լուծման, հնարավոր տարբերակ է, եթե ոլորտը համակարգող մարմինների մոտեցումները համնկնեն և կայացվեն քաղաքական որոշումներ:

Գոխրանի ղեկավար՝ Ա.Յուրինի հետ համատեղ ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն Երևան քաղաքում ցուցահանդես կազմակերպելու վերաբերյալ:

8. Գործուղվողը՝

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության պետ՝ Վահե Առաքելյան:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

20.11.2017թ.